թեան հարկաւոր է՝ ամենայն բարեգործք իբր սիրահարեցեալք յաւաջանասցեն ըստ իւրաքանչիւր գործ և Օգնական իւրաքանչիւր յընկերի իւրեանց եթէ խորհրդով, եթէ բանիւ և կամ գործով, զի հնչել կարասցեն ձայնս իւրեանց իբրև ձայն յԱստուծոյ զի կարի գտանել Շնորհս 'ի Տեառնէ ըստ աներկբայելի խոստման իւրոյ, որ ասաց ուրուք գոցի միաբանեալք 'ի յանուն իմ անդ և ես եղիցիմ 'ի միջի նոցայ. վասն այսորիկ 'ի վերայ բանիս Օգնականութիւնք իւրաքանչիւր աստիճանի հարկաւոր է և բազումք Օգնականք այժմոյս ունին իշխանութիւն 'ի ձեռին իւրեանց հրամայելոյ և հպատակք նոցայ կան 'ի հաւաստի հնազանդութեան նոցայ, որ սիրով ընդունելոց են զամենայն զոր ինչ հրաման 'ի նոցանէ որ ելցէ, այլ ես կրկնելով ասացից, որ 'ի մէնջ եթէ հրամայօղաց և յորդորողաց և աշխատօղաց և լսօղաց և հնազանդողաց ես ոչ ցանկամ, զի ելցէ խօսք մի արտաքոյ ընութեանց մարդոյ և ընդ դէմ կանոնի միոյ մասի Աստուածպաշտութեան և յատկապէս վասն ընչից և ստացուածոց ժողովրդոց, եթէ ոչ բոլորովին վասն հասարակաց բարութեանց և հոգոց և մարմնոց հասարակ ժողովրդեան, և եթէ գուցէ ընթերցող բանիս հարցանել կամիս թէ զինչ Օգնութիւն յումեքէ խնդրեմ և կամ յումեքէ զինչ գոլ կարէ մինչ յերկիր սատանեցաւ և ազգք ցրուեցան և